ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20

«14» ապրիլի 2020 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով Մարմաշեն համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի շենքի վերակառուցում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել որ՝

1)ծրագրի արժեքը կազմում է 40,000,000 (քառասուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 16,000,000 (տասնվեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը՝ Մարմաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի 9/1/1 գործառնական դասակարգման

(5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսական դասակարգման հոդվածից,

2)ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Մարմաշեն համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	----------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------
ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«14» ապրիլի 2020 թվական
գյուղ Մայիսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Մարմաշեն համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 14-ի թիվ 20 որոշման

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի շենքի վերակառուցում:
Մարզ	Շիրակի մարզ:
Համայնքը /համայնքները	Մարմաշեն համայնք, Հացիկ բնակավայր:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Երևանից - 126կմ Մարզկենտրոնից – 7.2 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	2019 թվականի հունվարի դրությամբ կազմում է 1171 մարդ
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Համայնքը չի հանդիսանում սահմանամերձ կամ բարձր լեռնային:
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	Հացիկ բնակավայրում ջրամատակարարումը սպասարկվում է <<Վեոլիա ջուր>> ՓԲԸ կողմից: 95 տոկոս բնակչությունը ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Ջրահեռացումչկա: Բնակավայրը գազաֆիկացված է 97 տոկոսով: Ոռոգման համակարգից օգտվում է բնակչության 80%-ը: Բնակավայրի ոռոգվող հողերը կազմում են ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերի 100%-ը: Փողոցաների լուսավորությունը կազմում է 65տոկոս՝ 52 լուսատու:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Դպրոցում սովորում են 114 աշակերտ, իսկ 2-5 տարեկան երեխաների թիվը կազմում է 50 հոգի:

	Հացիկ բնակավայրը չունի մանկապարտեզ, երեխաների գերակշիռ մասը նախադպրոցական կրթություն չեն ստանում: Մանկապարտեզ հաճախելը շատ կարևոր է յուրաքանչյուր փոքրիկի դաստիարակության համար: Անհրաժեշտ է բարելավել նախադպրոցական կրթության որակը և ապահովել մատչելիությունը հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար: Մանկապարտեզը տեղակայված կլինի երկհարկանի կառույցի առաջին հարկում՝ և նախատեսված կլինի 60-70 երեխայի համար: Կլինեն խմբային, ննջարանային սենյակներ, սանհանգույց և հանդերձարան, խոհանոց, լվացքատուն և պահոցներ, տնօրենի սենյակ, մարմնամարզության և խաղերի դահլիճ: Առանձին մուտքով կլինի նաև դահլիճ նախատեսված երգի և պարի խմբակների համար: Ծրագրի շրջանակներում կբարեկարգվի նաև շրջակա տարածքը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումից ակնկալվող արդյունքները հետևյալն են. Նախադպրոցական որակյալ կրթություն: Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում Են ընտանիքում, բայց հասարակությանը ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է մանկապարտեզը: Մանկապարտեզի առօրյան, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխաներին շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ սիստեմատիկ գրաֆիկին, դառնալ ավելի ինքնուրույն:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	• Կազմել մանկապարտեզի շենքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, • Կազմակերպել օրենքով սահմանված կարգով մրցույթ: • Արդյունքների ամփոփում, պայմանագրի կնքում: • Ապահովել ֆինանսական ներդրման համաֆինանսավորում: • Հետևել ընտրված շինարարաի կատարվող աշխատանքների • որակին և ծրագրի վերջնական արդյունքին:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ծրագրի իրականացման արդյունքում հիմնանորոգվող մանկապարտեզի շենքը և գույքը կլինեն Մարմաշեն համայնքի սեփականությունը: Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի ավարտից հետո համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները՝ (Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի շենքը) կավելանան 40.000.000 դրամով:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի ամբողջ բնակչությունը /1171 մարդ/: Գյումրի քաղաքի և հարակից համայնքների մանկապարտեզներ հաճախող երեխաների ընտանիքները կունենան խնայողության հնարավորություն՝ մատչելի վարձավճարների և տրանսպորտային ծախսերի կրճատման մասով:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Ծրագրի իրականացման (շինարարության) ընթացքում կստեղծվեն թվով 5-10 ժամանակավոր աշխատատեղեր: Համայնքապետարանի կողմից նախատեսված մանկապարտեզի բացման դեպքում կստեղծվեն առնվազն 12 նոր հիմնական աշխատատեղեր: .տնօրեն-1 .մեթոդիստ, ուսումնական գծով տնօրենի տեղակալ-1 .բուժքույր-1 .հաշվապահ-1 .դաստիարակ-1 .դաստիարակի օգնական-1 .խոհարար-1 .խոհարարի օգնական-1 .տնտեսվար-1 .երաժշտության մասնագետ-1 .պահակ-1 .հավաքարար-1
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	*Նախորդ տարվա բյուջեն՝ 447327.4 հազ. դրամ.*

	Պլանըհազ.դրամ	Փաստացին	Տոկոսը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները *այդ թվում՝*	376883,6	345509,1	91,7
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	376883,6	345509,1	91,7
- Սեփական եկամուտներ	130599,0	97702,5	74,8
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ		-10454,9	
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	562908,1	403984,0	71,7
- Վարչական բյուջեի ծախսեր	376883,6	289593,1	76,8
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	228024,4	156390,9	68,5
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, *որից՝*	228024,4	156390,9	68,5
Շենք-շինությունների կապիտալ վերանորոգում	72524,4	48731,7	67,1
Վարչական սարքաորումների ձեռքբերում	3000,0	125,0	4,1
Տրանսպորտային սարքավորումներ	96700,0	96690,0	99,9
Այլ մեքենաներ, սարքավորումներ	27500,0	19629,2	71,3
Նախագծահետազոտական ծախսեր	3000,0	1620,0	54

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

498190.3հազ. *դրամ.*

	Պլանը հազ.դրամ
Ընդամենը՝համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդթվում՝*	407927.6
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	407927.6
- սեփական եկամուտներ	130305.9
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	----------
Ընդամենը՝համայնքիբյուջեիծախսեր, *որից՝*	498190.3
- Վարչական բյուջեի ծախսեր	401927.6

	-Ֆոնդային բյուջեի ծախսեր	90262.7
	Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից՝*	
	Մարմաշենհամայնքիսուբվենցիոնծրագրերիհամա ֆինանսավորում:	167000.0
Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	Համայնքի 2020թ.-ի բյուջեով հնարավոր չէ, քանի որ 498190.3 հազ. ՀՀ դրամից հատկացվելուէ. - Թվով 3 ՀՈԱԿ-ներինհ – 62401.0 հազ. ՀՀ դրամը - Համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձի և - պահպանման ծախսեր – 272662.7 հազ. ՀՀ դրամ - Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների - համար – 16000.0 հազ. ՀՀ դրամ - Սոցիալական պաշտպանության ծրագրերի համար–6000.0 հազ. - ՀՀ դրամ - Պահուստֆոնդ – 75626.0 հազ. ՀՀ դրամ - Ճանապարհային տրանսպորտ – 36 000.0 հազ. ՀՀ դրամ - Գյուղատնտեսություն – 9000.0 հազ. ՀՀ դրամ - Աղբահանություն – 16 000.0 հազ. ՀՀ դրամ - Հանգիստ և մշակույթ – 4 500.0 հազ. ՀՀ դրամ	
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայությանարժեքը՝ _____ դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	40.000.000դրամ (100%) 1.501.200 դրամ 764.000 դրամ 256.300 դրամ 198.500 դրամ	

Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	16.000.000 դրամ (40 %)
Այլ ներդրողներ	*Չկան:*
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբը հունիս 2020թ. Տևողությունը 6 ամիս*
Ծրագրի ծախսերը	Ծրագրի իրականացման համար նախատեսվել է ծախսել 40.000.000 ՀՀ դրամ, որի համար հիմք հանդիսացող նախագծանախահաշվային փաստաթղթերը կներկայացվեն:
Ամսաթիվ	*30 հունվար 2020 թ.*

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու ՄենիկՄանուկյան

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը +37493063080 senal74@mail.ru

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ